# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Տրանսպորտային նյութերի»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 4-ին կնքված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով պայմանագիրը 2018 թվականի սեպտեմբերի 12-ից միակողմանի մասնակի լուծման վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ՝ | Բնապահպանության նախարարության և «Տուրբոլայն» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով գնման պայմանագրով «Տուրբոլայն» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորության՝ ապրանքի մատակարարման ժամկետների խախտում: |
| Փոփոխության նկարագրություն՝ | Հիմք ընդունելով բնապահպանության նախարարության և «Տուրբոլայն» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ բնապահպանության նախարարությունը 2018 թվականի սեպտեմբերի 12-ից միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով՝ ընդհանուր 435 700 (չորս հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամի տրանսպորտային նյութեր (փոխանցման տուփի յուղեր MPM (39 լիտր՝ 50.7 հազար դրամ), շարժի յուղ MPM (350 լիտր՝ 385.0 հազար դրամ)); |
| Փոփոխության հիմնավորում՝ | Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետ: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **ՀՀ բնապահպանության նախարարություն:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

**SECRETARY GENERAL**

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГЕНЕРАЛЬНЫЙ СЕКРЕТАРЬ**

0010, ք.Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
պաշտոնական էլ.փոստ 10010608@e-citizen.am
էլ.փոստ /E-mail/ эл.почта: min_ecology@mnp.am
Web page: www.mnp.am
☎ (374 11) 818 520
🖷 (374 11) 818 506

№ 5/06.2/51799
«12» «09» 2018 թ.

«Տուրբոլայն» ՍՊԸ-ի
տնօրեն Ա.Գասպարյանին
ք.Երևան, Շիրազի 39/1

Հարգելի պարոն Գասպարյան

Բնապահպանության նախարարության և «Տուրբոլայն» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 4-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/19-4» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունն ստանձնել է 665000 (վեց հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով տրանսպորտային նյութերի (այսուհետ՝ ապրանք) մատակարարման պարտավորություն, ինչի համար կատարման վերջնաժամկետը սահմանված էր մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: Մինչև 2018 թվականի սեպտեմբերի 12-ը չմատակարարված ապրանքների ընդհանուր գումարը կազմում է 435 700 (չորս հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, իսկ ապրանքների մատակարարման ժամկետը խախտվել է 73 (յոթանասուներեք) օր:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ բնապահպանության նախարարությունը 2018 թվականի սեպտեմբերի 12-ից միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը չմատակարարված ապրանքների մասով:

Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման հետևանքով, համաձայն պայմանագրի 6.2 կետի, հաշվարկված տույժը կազմում են 15 903 (տասնհինգ հազար ինը հարյուր երեք) ՀՀ դրամ (435700 x 0.05% x 73օր):

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի

18-րդ ենթակետի «դ» կետով, ինչպես նաև հաշվի առնելով Ձեր ընկերության կողմից 2018 թվականի մայիսի 4-ին միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրով ստանձնած պարտավորությունը՝ պայմանագրի կատարման ապահովման տուժանքը Պայմանագրի միայն չկատարված մասով կազմում է 43 570 (քառասուներեք հազար հինգ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

Առաջարկում եմ՝ հաշվարկված ընդհանուր տույժերը, ինչը կազմում է 59 473 (հիսունինը հազար չորս հարյուր յոթանասուներեք) դրամ, սույն ծանուցումն ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում փոխանցել ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության 900011018646 հաշվեհամարին և բնապահպանության նախարարություն ներկայացնել վճարման անդորրագիրը:

Հարգանքով՝ Հ. Հովհաննիսյան

Ֆինանսատնտեսական վարչության
Բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժին
Լ.Զոհրաբյան 011 818 514